

«ԳՅՈՒՂԱԳԻՐ» ՏՆՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ

Կ. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առաջին անգամ «գյուղագիր» տերմինը, որ բառացի, ըստ երևույթին, նշանակում է գյուղի մասին գրող, որքան մեզ հայտնի է, հորինել և գործածել է Դավիթ Անանունը՝ Բաբկենցի մասին գրած մահախոսականում¹։ Մինչ այդ՝ 1880—1900-ական թվականներին գրողների այդ խմբի համար գործածվում և շրջանառության մեջ էին ժողովրդական, ժողովրդային, ժողովրդագետ, ժողովրդասեր, ժողովրդասլաշտ և ժողովրդագրող որակումները։ Դժվար չէ նրկատել, որ բոլոր այդ որակումները «народник», «народнический» ուսերեն բառերի թարգմանություններն են։ Նարոդնիկական (ժողովրդական) գրականության ամենավաղ հիշատակումներին մեր մամուլում հանդիպում ենք 1880-ական թվականների սկզբներին։ «Մեր երեկվա համարում,— գրում է «Մշակը» ներքին լուրեր բաժնում,— մենք հիշեցինք ուս ժամանակակից գրող էնգելզարդի մասին։ Այժմ մենք կուզենայինք հիշել այստեղ ուս ժամանակակից այն գրողների անունները, որոնք հետազոտելով ժողովրդական կյանքը և մանավանդ գյուղացու կյանքը, նրանց գրվածները, եթե ուսումնասիրեն մեր հայ մամուլի գավառական թղթակիցները, կարող են օրինակելի համարվել մեզ համար, մեր ժողովրդի, մանավանդ մեր գյուղացու կյանքը բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար։ Այդ գրողների ազգանունները հետևյալներն են. էնգելզարդ, Ֆլերովսկի, Սոկոլով, Դուրովաչով, Ուսպենսկի, Նաումով, Զլատովրատսկի և Ֆեդոսենկ՝ նույնպես մի գրող, որ ստորագրում է Վ. Վ. տառերով։ Այս բոլոր հեղինակների գրվածները ընթերցողը կարող է գտնել ուսաց հետևյալ ամսագիրներում. «Отечественные записки», «Устои» և «Наблюдатель» ամսագիրներում, որոնց ուղղությունը ժողովրդական է և որոնք իրանց նվիրել են ժողովրդի կյանքի ուսումնասիրությանը²։ Նարոդնիկական այս շրջանում թարգմանվում էր ժողովրդական— ժողովրդային համարժեքներով³ և միայն 90-ական թվականների սկզբներին, Ա. Վ. Արասխանյանի նախաձեռնությամբ, «народнический»-ը թարգմանվում է ժողովրդասիրական համարժեքով⁴։ Այնուհետև տերմինը շրջանառության մեջ է դրվում և գործածվում մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխություն։ Ծիշտ է, ժողովրդասերի հետ միաժամանակ և զուգահեռաբար գործածում էին ժողովրդասլաշտ, ժողովրդագրող, ժողովրդագետ համարժեքները, բայց դրանք բոլորը միասին այլ բան չէին, քան «народник» և համապատասխանաբար, «народнический» բառերի հայերեն թարգմանության տարբերակները։ Որ այդ այդպես է, և, որ մեր գրական քննադատության մեջ գյուղագիրների խումբը համարվել է նարոդնիկ գրողների խումբ, կարելի է համոզվել թերթերով ինչպես 1890—1900-ական թվականների մամուլը, այնպես էլ Պ. Պոռշյանին և գյուղագիրներին նվիրված առանձին ուսումնասիրություններն ու քննադատական ելույթները։

Մի օրինակ. 1908 թվականին Ավ. Տեր-Հարությունյանը Պ. Պոռշյանի մասին հրատարակած գրքույկի մեջ գրել է. «Առհասարակ ժողովրդագրությունը մեր մեջ տաղանդավոր ներկայացուցիչներ չուվեց. եղան ումանք՝ Արարատ-

1 Տե՛ս «Գործ», Բաքու, 1917, № 11—12, էջ 209—210։

2 «Մշակ», 1882, № 17։

3 «Մեղու Հայաստանի», 1881, № 48։

4 «Մուրճ», 1891, № 5։

յան, Գ. Բարխուդարյան, որոնք իբրև վիպագիրներ՝ Պոռշյանի նման պառավախոս Հերիաթաբանների դուրս եկան, իսկ սրանցից հետո եկողները, գուցե ուսաց ժողովրդագրողների օգնությամբ, մի փոքր հմտությամբ ցույց տվեցին. թեև դերժ մնացին հատուկ շատախոսությունից և հետո չգնացին վիպագրության մասին նրանց ունեցած հասկացությունից՝ Ագապյան, Ճուղուրյան, Տեր-Ավետիսյան, Նամալյան, Հ. Մալխասյան և այլն: Սրանք ժամանակի ծնունդ էին և «ստառ» (այսինքն՝ ուս—Կ. Գ.) գրողների հետևողները⁵:

1908 թ. Մ. Բերբերյանը, որ հրաշալի գիտեր ուս գրականությունն ու նարոդսի՝ բելետրիստներին, Պ. Պոռշյանի մասին դրած գրքով կոմ նկատում է. «Հեղինակների մի շարք գերակշռություն է տալիս ժողովրդագրությանը և կաղմում մեր ռեալիստ ժողովրդագրողների շկոլա՝ Պ. Պոռշյանը, Ճուղուրյանը, Ագապյանը, Մալխասյանը, մասամբ Շիրվանզադեն, Աղայանը⁶: Նարոդնիկական բելետրիստիկան և ժողովրդագրությունը նույն հասկացություններն են, և Բերբերյանը հենց այդ իմաստով էլ օգտագործում է ռեալիստ «ժողովրդագրողների շկոլա» արտահայտությունը:

Ինչպես Վրթանես Փափաղյանը, այնպես էլ Լեոն, Ավ. Արասխանյանը, Հ. Առաքելյանը և շատ ուրիշներ «народники» և «народнический» բառերի դիմաց գործածում էին սրանց հայերեն համարժեքները՝ ժողովրդասեր, ժողովրդասիրություն, ժողովրդասիրական շարժում և այլն: 1910-ական թվականներից սկսած նարոդնիկ և նարոդնիկական տերմինները սկսվում են գործածվել նաև առանց թարգմանության:

Դավիթ Անանունը 1917 թ. արդեն հիշատակված մահախոսականում գրել է. «Հայ գրականությունն էլ է հարկ տվել այն ուղղության, որ ուսաների մեջ հայտնի է ժողովրդապաշտ-նարոդնիկական անունով: Ճիշտ է, մենք չունեցանք մեր Գլեբ Ուսպենսկին, Ջլատովրատսկին, մեր գրողները խոշոր գրական տաղանդ չցուցահանեցին, սակայն նրանք ըստ չափու կարողության զբաղվեցին գյուղական կենցաղի նկարագրությամբ և իրանց համակրության առարկան դարձրին հայ գեղջուկին: Ագապյան, Աղելյան, Ճուղուրյան, Ստ. Տեր-Ավետիսյան և մյուսները ժողովրդապաշտ ուղղության վիպագիրները հանդիսացան մեր մեջ⁷: Նախահեղափոխական գրականագիտությունը գյուղագրություն փոքր-ինչ անորոշ հասկացության փոխարեն գործածել է ժողովրդագրական, ժողովրդապաշտական, ժողովրդասիրական և վերջապես, ժողովրդական մեր Գլեբ Ուսպենսկինը՝ մատնացույց անելով գրական այդ դպրոցի՝ ուսականի հետ ունեցած ծագումնաբանական և գաղափարական ուղղակի կապերը:

1920-ական թվականների սկզբներին Արսեն Տերտերյանը, ելնելով գյուղագրության մասին նոր պատկերացումից, սկսեց գործածել գյուղագիր տերմինը, որ հիմա չափազանց հարմար էր այն բոլոր գրողների համար, որոնց նա մտցնում էր գյուղագրության մեջ: Տերտերյանի գործածությամբ գյուղագիր տերմինը, իրոք, արդեն ոչ մի գաղափարական իմաստ չունի և նշանակում էր պարզապես գրող, որը գրել է գյուղի մասին: Իհարկե, «նկատողությունների» մեջ Տերտերյանը տարբերում է, ասենք, «սոցիալիստ» («նարոդնիկ») և նորդարական գյուղագիրների, բայց խնդիրը էապես նրան չի զբաղեցնում: Նա միայն հակված է տեսնելու այն շրջագիծը, որ իր մեջ առնում է գյուղագիրների, այսինքն՝ Աբովյանից մինչև Բակունց:

1930—40-ական թվականներին նարոդնիկության հանդեպ պատմական գիտության մեջ մշակված գոհիկ տեսակետները թափանցեցին գրականագիտություն և մյուս կողմից կանխորոշեցին ամեն մի նարոդնիկականի նկատմամբ մի որոշ բացասական վերաբերմունք: Տերտերյանի դասախոսություններում արդեն, ինչպես նաև գրականության պատմության դասագրքերում.

⁵ Ավ. Տեր-Հարությունյան, Պոռշյանը և նրա գործունեության արժեքը, Նոր-Նախիջևան, 1908, էջ 39—40:

⁶ Մ. Բերբերյան, Պերճ Պոռշյան, Վաղարշապատ, 1908, էջ 5:

⁷ «Գործ», 1917, № 11—12, էջ 209:

հայ նարոդնիկական գեղարվեստական գրականությունը, որ գյուղագրությունը նշանակում էր ստացել, աստիճանաբար և լռելյայն կորցրեց իր իսկական անունը և գաղափարական ու հասարակական պատմական բովանդակությունը։ Որոշ անտեղյակներ այսօր արդեն ելնում են հենց այս վերջին պատկերացումից՝ գյուղագիր տերմինի մեջ շտեմբելով ո՛չ գաղափարական և ո՛չ էլ քաղաքական իմաստ։ Պատմականորեն և հոգեբանորեն հասկանալի այս փաստը չի աղատում, սակայն, նրանց սխալվելու հնարավորությունից, որովհետև հենց այստեղից էլ սկիզբ են առնում գյուղագրական գրականության (կամ նարոդնիկական գեղարվեստական գրականության) տարբերակման սահմանների ու չափանիշների հարցերը։

О ТЕРМИНЕ «ГЮХАГИР»

К. А. ДАНИЕЛЯН

Р е з ю м е

Термин «гюхагир» впервые появился в нашей печати в 1910-х гг. и обозначал писателя, пишущего о деревне. Этот термин был создан на базе слов «жоховрдагрох», «жоховрдасер», «жоховрдагет», которые употреблялись в 1880—1900 гг. как переводы русских слов—«народник» и «народнический».